

կանության ու միջազգային հարաբերությունների բնագավառներում զբաղված տարբեր մասնագետների խոր և բազմակողմանի ուսումնասիրության կարելու օբյեկտներից մեկը, քանի որ տնտեսական բարեփոխումների անցած տարիներին հանրապետության ներքին ու արտաքին տնտեսական դրությունը այնպիսի դինամիկա է ունեցել, եւ ըստ այդմ բարեփոխումների ենթարկվող մոդելը կարիք ունի տնտեսական անվտանգության ապահովման տեսանկյունից լրջագույն փորձաքննության ու գնահատման: Այս ամենով պայմանավորված, կարծում ենք, ներկայումս խիստ հրամայական է դարձել երկրի ազգային անվտանգության եւ, մասնավորապես, տնտեսական անվտանգության ապահովման ուղղությամբ գործնական միջոցառումների մշակումը եւ հետեւողական իրականացումը: Պետք է նշել, որ մինչեւ այժմ չեն ձեռնարկվել հանրապետության տնտեսական անվտանգության համապատասխան հայեցակարգի, ծրագրերի, արդյունավետ քաղաքականության, իրավական ու ինստիտուցիոնալ ենթակառուցվածքի մշակման շատ թե քիչ նշանակալից քայլեր՝ չնայած խնդիրը, մեր կարծիքով, չափազանց կարելու է ու անհետաձգելի: Որպես անհրաժեշտ պայման, հարկ է անհապաղ անդրադառնալ տարբեր բնույթի վտանգներից ու վնասներից ազգային տնտեսության պաշտպանության պայմանների, չափանիշների եւ ցուցանիշների, կազմակերպական եղանակների ու մեխանիզմների համակարգի մշակմանը, ազգային պետական շահերի հետ տնտեսական անվտանգության կապի իմաստավորմանը: Տնտեսական անվտանգության մակարդակը պետք է գնահատել ցուցանիշների այնպիսի համակարգով, որոնք կարտացոլեն տնտեսության գործառնայի սահմանային արժեքները: Այսինքն, այն սահմանը, որից դուրս տնտեսությունը կորցնում է դինամիկ ինքնազարգացման ունակությունը, մրցունակությունը ներքին ու արտաքին շուկաներում, դառնում է միջազգային էքսպանսիաների, երկրի ազգային հարստության ներքին ու արտաքին կողոպուտի օբյեկտ, ծաղկում է կոռուպցիան, իսկ տնտեսությունը քրեականացվում է:

Ներկայացվել է 16.02.2017թ.
Ընդունվել է տպագրության 28.02.2017թ.

Բանալի բաներ՝

մրցակցություն, համակենտրոնացում, համակենտրոնացումների նկատմամբ հսկողություն, համակենտրոնացումների հայտարարագրում:

Տնտեսական մրցակցության պաշտպանության եւ մրցակցային արդյունավետ միջավայրի ձեւավորման խնդիրը մեծապես կապված է համակենտրոնացումների նկատմամբ հսկողության արդյունավետ մեխանիզմների կիրառման հետ, որով էլ պայմանավորված մրցակցային մարմինները վերահսկողություն են իրականացնում նաեւ համակենտրոնացման գործարքների նկատմամբ: Հարկ է նշել, որ համակենտրոնացումներն արդյունք են ոչ միայն տարբեր ընկերություններում ընդունված կառավարչական որոշումների, որոնք հաճախ պայմանավորված են գործունեության ոլորտի փոփոխության անհրաժեշտությամբ, ընկերության տնտեսական ցուցանիշների բարելավմամբ, նոր տեխնոլոգիաների ներդրմամբ եւ այլն, այլ նաեւ ժամանակակից աշխարհում տեղի ունեցող կոոպերացման բարձր մակարդակն ինքնին ստիպում է ձեւավորել վերազգային կամ ներազգային կորպորացիաներ, որոնց տիրապետման ներքո են հայտնվում նախկինում միմյանց մրցակից համարվող ընկերությունները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խոշոր ընկերությունները, ունենալով գերիշխող դիրք եւ շուկայական իշխանություն համապատասխան ապրանքային շուկաներում, ապա կարող են միավորվել, ձեռք բերել իրենց մրցակից ընկերությունների ակտիվները, բաժնեմասերը, ստանալ նրանց գործողությունների նկատմամբ հսկողության հնարավորություններ, բազմաթիվ երկրների, այդ թվում՝ նաեւ Հայաստանի օրենսդրությունները սահմանում են համապատասխան ընթացակարգեր, որոնք անհրաժեշտ է պահպանել նման գործարքներ իրականացնելիս: Համակենտրոնացումների նկատմամբ հսկողություն սկսվել է իրականացվել ԱՄՆ-ում 1914թ. ընդունված Քլեյտոնի ակտով: Այդ ժամանակահատվածում ԱՄՆ-ում թեեւ արդեն իսկ գործում էր համամենաշնորհային օրենսդրություն, որը հայտնի էր Շերմանի ակտ անվանմամբ, սակայն վերջինս չէր կարգավորում միաձուլումների եւ փայաբաժինների ձեռքբերման արդյունքում մրցակցային միջավայրի սահմանափակման հնարավորությունները: Ըստ էության, համակենտրոնացումների նկատմամբ հսկողության անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ մրցակցության պաշտպանությամբ զբաղվող մարմիններն այս գործիքակազմի կիրառմամբ հնարավորություն են ստանում պայքարելու ոչ թե տնտեսվարող սուբյեկտների կողմից կատարվող խախտումների դեմ, այլ իրականացնելու կանխարգելիչ գործառնային թույլ չտալով ռիսկային համարվող ապրանքային շուկաներում կենտրոնացվածության մակարդակի աճ:

Հայաստանում համակենտրոնացումների նկատմամբ հսկողություն սկսվել է իրականացվել դեռեւս 2000 թվականից, երբ ընդունվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը: 2000թ. ի վեր համակենտրոնացումների հայտարարագրմանը վերաբերող ընթացակարգերը մի քանի անգամ ենթարկվել են փոփոխությունների: Մասնավորապես՝ փոփոխվել են ինչպես հայտարարագրման ենթակա համակենտրոնացման գործարքների տեսակները, այնպես էլ համակենտրոնացման հայտարարագրման շեմերը:

Անհրաժեշտ է նշել, որ համակենտրոնացումների նկատմամբ իրականացվող հսկողության շրջանակներում մրցակցային մարմիններն արգելում են գործարքի իրականացումը միայն այն դեպքում, երբ դրա արդյունքում մրցակցությունն

Օգտագործված գրականություն

1. Балакина А.П., Кваша Ю.Ф., Цыпин И.С. и др., Экономическая безопасность Российской Федерации, В 2 т, Учебник для вузов, Всероссийская гос. налоговая академия, М., 1248 с., 2001.
2. Возжеников А.В., Национальная безопасность России, Методология исследования и политика обеспечения, Монография, М., РАГС, 424 с., 2002.
3. Основы экономической безопасности (государство, регион, предприятие, личность, Под. ред. Олейникова Е.А., ЗАО "Бизнес-школа "Интел-синтез" М. 1997.
4. Экономическая безопасность, Под ред. В. К. Сенчагова, М., ЗАО Финстатинформ, 621 с., 1998.

ապրանքային շուկայում կարող է եականորեն սահմանափակվել: Նման մոտեցումը ընդհանրական է աշխարհի բազմաթիվ երկրներում, այդ թվում՝ նաև Հայաստանում: Համակենտրոնացումների նկատմամբ հսկողության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ի տարբերություն մրցակցության պաշտպանության բնագավառի այլ խնդիրների (մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումներ, հակամրցակցային համաձայնություններ, անբարեխիղճ մրցակցության գործողություններ) համակենտրոնացումների վերաբերյալ կատարվող ուսումնասիրությունները նպատակ ունեն բացահայտելու ոչ թե նախկինում կատարվող հնարավոր չարաշահումները, այլ գնահատելու կատարվող գործարքի արդյունքում՝ հեռանկարային առումով մրցակցության խաթարման հնարավոր ռիսկերը: Միաժամանակ՝ համակենտրոնացման գործարքի արդյունքում կարող է մեծանալ ընկերությունների շուկայական իշխանությունը, ձեռավորվել կամ ամրապնդվել գերիշխող դիրքը՝ մեծացնելով գործարքի մասնակից ընկերությունների՝ շուկայի վրա միակողմանիորեն ազդելու հնարավորությունները, ինչը կարող է դրսևորվել իրացվող ապրանքների գների բարձրացմամբ, կատարվելիք նորարարությունների ու թողարկվող ապրանքների կրճատմամբ, ապրանքների որակի վատթարացմամբ եւ այլ ձևերով՝ վերջնարդյունքում վնասելով մրցակցային միջավայրի ձեռավորմանն ու սպառողների շահերի իրացմանը: Այսինքն՝ նման գործարքի արդյունքում կարող են առաջանալ գնային եւ ոչ գնային չարաշահման ռիսկեր, որոնք պարտադիր չէ, որ հանդես գան միաժամանակ: Նկատենք նաև, որ, ըստ էության, ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղահայաց համակենտրոնացման գործարքի արդյունքում մրցակցության սահմանափակման հնարավորություն այս կամ այն չափով առկա է բազմաթիվ գործարքների դեպքում եւ այս առումով մրցակցային մարմնի խնդիրն է թույլ չտալու մրցակցության եական սահմանափակող գործարքների կայացումը:

Ներկայումս Հայաստանում գործող օրենսդրության համաձայն՝ համակենտրոնացումները կարող են լինել հետևյալ ձևերով.

- տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի ակտիվների՝ 20%-ը կամ ավելի չափով ձեռք բերումը,

- տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի փայաբաժնի՝ 20%-ը կամ ավելի չափով ձեռք բերումը,

- տնտեսվարող սուբյեկտների միացումը,

- տնտեսվարող սուբյեկտների միավորումը, որի արդյունքում մեկ տնտեսվարող սուբյեկտ հնարավորություն է ստանում ազդել մեկ այլ տնտեսվարող սուբյեկտի որոշումների կայացման կամ մրցունակության վրա:

Անհրաժեշտ է նշել, որ հայտարարագրման պարտավորությունը կրում են համակենտրոնացման մասնակիցները, որոնք տարբերվում են՝ կախված համակենտրոնացման ձևից: Այսպես, միացման, միաձուլման եւ միավորման դեպքերում համակենտրոնացման մասնակիցներ են համարվում՝ համապատասխանաբար միմյանց միացող, միաձուլվող եւ միավորվող տնտեսվարող սուբյեկտները, ակտիվների ձեռքբերման դեպքում՝ ակտիվներ իրացնող եւ ձեռք բերող, իսկ փայաբաժնի ձեռքբերման դեպքում՝ փայաբաժնի ձեռք բերող տնտեսվարող սուբյեկտը եւ այն տնտեսվարող սուբյեկտը, որի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում փայաբաժնի է ձեռք բերվում:

Կախված համակենտրոնացման գործարքի արդյունքում առաջացող ռիսկերից՝ դրանք ընդունված է բաժանել երեք խմբերի՝

- միեւնույն ապրանքային շուկայում գործող (մրցակից հանդիսացող) տնտեսվարող սուբյեկտների միջեւ (հորիզոնական համակենտրոնացում).

- որոշակի փոխկապակցվածություն ունեցող տարբեր ապրանքային շուկաներում գործող (մրցակից չհանդիսացող՝ տվյալ ապրանքի եւ (կամ) դրա փոխադարձ փոխարինելի ապրանքներ իրացնող ու ձեռք բերող) տնտեսվարող սուբյեկտների միջեւ (ուղղահայաց համակենտրոնացում).

- տարբեր ապրանքային շուկաներում գործող տնտեսվարող սուբյեկտների միջեւ (խառը համակենտրոնացում):

Նկատենք, որ Հայաստանում համակենտրոնացումները ենթակա են հայտարարագրման ոչ բոլոր դեպքերում, այլ միայն այն դեպքերում, երբ համակենտրոնացման մասնակիցների ակտիվների եւ (կամ) հասույթների ար-

ՀՏԴ 339.137.2

ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՁԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Սույն ուսումնասիրությունն իրականացվել է Գիտության եւ կրթության հայ ազգային հիմնադրամի (ԿՀԱՀ, Նյու Յորք, ԱՄՆ) կողմից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում:

**Արման
ՄԱՆԱՍԵՐՅԱՆ**
*Տնտեսագիտության
թեկնածու*

Տարբեր երկրների հայտարարագրման ենթակա համակենտրոնացման շեմերը՝ ըստ դրա տեսակի			Աղյուսակ 1.
Յ/հ	Երկրի անվանումը	Համակենտրոնացման տեսակը	Հայտարարագրման ենթակա համակենտրոնացման շեմերը
1	Լատվիա ⁶	Ուղղահայաց և հորիզոնական	Եթե բոլոր մասնակիցների տարեկան իրացման շրջանառությունը երկրի ներսում գերազանցում է 30 մլն եվրոն և մասնակիցներից առնվազն երկուսն առանձին վերջված ունեն 1.5 մլն եվրոն գերազանցող տարեկան իրացման շրջանառության ծավալներ
2	Լիտվա ⁷		Եթե համակենտրոնացման բոլոր մասնակիցների տարեկան իրացման շրջանառությունը գերազանցում է 14.5 մլն եվրոն և մասնակիցներից առնվազն երկուսն առանձին վերջված ունեն 1.45 մլն եվրոն գերազանցող տարեկան իրացման շրջանառության ծավալներ
3	Բելգիա ⁸		Եթե համակենտրոնացման բոլոր մասնակիցների տարեկան իրացման շրջանառությունը գերազանցում է 100 մլն եվրոն և մասնակիցներից առնվազն երկուսն առանձին վերջված ունեն 40 մլն եվրոն գերազանցող տարեկան իրացման շրջանառության ծավալներ
4	Կանադա ⁹		Եթե համակենտրոնացման մասնակիցների ակտիվների արժեքը կամ տարեկան եկամուտը (Կանադայում կամ դրա սահմաններից դուրս ստացված) գերազանցում է 400 մլն կանադական դոլարը և եթե ձեռքբերվող ակտիվների արժեքը կամ բաժնեմասը գերազանցում է 87 մլն կանադական դոլարը
5	Գերմանիա ¹⁰		Եթե համակենտրոնացման մասնակիցների տարեկան իրացման շրջանառությունը գերազանցում է 500 մլն եվրոն և մասնակիցներից առնվազն մեկի տարեկան իրացման շրջանառությունը երկրի ներսում գերազանցում է 25 մլն եվրոն և համակենտրոնացման մեկ այլ մասնակցի տարեկան իրացման շրջանառությունը երկրի ներսում գերազանցում է 5 մլն եվրոն
6	Ռուսաստան ¹¹		Միաձուլումների դեպքում, եթե բոլոր մասնակիցների տարեկան իրացման շրջանառությունը գերազանցում է 10 մլրդ ռուբլին
			Փայաբաժինների ձեռքբերման դեպքում, եթե մասնակիցների տարեկան իրացման շրջանառությունը գերազանցում է 10 մլրդ ռուբլին և համակենտրոնացման մասնակցի ակտիվների արժեքը գերազանցում է 400 մլն ռուբլին
			Միաձուլումների դեպքում, եթե բոլոր մասնակիցների ակտիվների արժեքը գերազանցում է 7 մլրդ ռուբլին
7	Ֆրանսիա ¹²		Փայաբաժինների ձեռքբերման դեպքում, եթե մասնակիցների ակտիվների արժեքը գերազանցում է 7 մլրդ ռուբլին
			Փայաբաժինների ձեռքբերման դեպքում, եթե մասնակիցների ակտիվների արժեքը գերազանցում է 15 մլրդ ռուբլին
8	Միացյալ Թագավորություն ¹³	Եթե Ֆրանսիայում, եթե բոլոր մասնակիցների տարեկան իրացման շրջանառությունը գերազանցում է 150 մլն եվրոն (մանրածախ շուկաների դեպքում՝ 75 մլն եվրոն) և մասնակիցներից առնվազն երկուսն առանձին վերջված ունեն 50 մլն եվրոն գերազանցող տարեկան իրացման շրջանառության ծավալներ (մանրածախ շուկաների դեպքում՝ 15 մլն եվրոն)	
9	ԱՄՆ ¹⁴	Եթե Միացյալ Թագավորությունում տնտեսվարող սուբյեկտի տարեկան իրացման շրջանառությունը գերազանցում է 70 մլն ֆունտը, կամ եթե երկրի օրենսդրության մեջ սահմանված որոշ ապրանքների կամ ծառայությունների ձեռքբերման կամ վաճառքի (մատուցման) ծավալը գերազանցում է ընդհանուր իրացման կամ ձեռքբերման 25 %-ը	
10	Հայաստան	Ուղղահայաց	Եթե գործարքի արժեքը գտնվում է 78.2-312.6 մլն դոլլարի միջակայքում և բավարարում են գործարքի մասնակիցներին վերաբերող շեմերը: Մասնավորապես եթե գործարքի մասնակիցը, ում տարեկան իրացման շրջանառությունը կամ ակտիվների արժեքը գերազանցում է 156.3 մլն դոլլարը, ձեռք է բերում այլ տնտեսվարող սուբյեկտի, ում տարեկան իրացման շրջանառությունը կամ ակտիվների արժեքը գերազանցում է 15.6 մլն դոլլարը կամ հակառակը: Եթե գործարքի արժեքը գերազանցում է 312.6 մլն դոլլարը, ապա գործարքը ենթակա է հայտարարագրման անկախ մասնակցի ունեցած իրացման կամ ակտիվների ծավալներից:
10	Հայաստան	Հորիզոնական	Համակենտրոնացման մասնակիցների հասույթի ընդհանուր չափը նախորդող ֆինանսական տարում կազմել է 3 միլիարդ դրամ
		Հորիզոնական	Համակենտրոնացման մասնակիցների ակտիվների ընդհանուր արժեքը դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում կազմել է 1 մլրդ դրամ
			Համակենտրոնացման մասնակիցների տարեկան հասույթների ընդհանուր չափը կազմել է 1 մլրդ դրամ
			Համակենտրոնացման մասնակիցների ակտիվների ընդհանուր արժեքը դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում կազմել է 0.5 մլրդ դրամ

ժեքները գերազանցում են սահմանված շեմերը կամ էլ երբ համակենտրոնացման մասնակից ընկերությունը ունի գերիշխող դիրք: Այս առումով ուշագրավ է այն, որ որոշ երկրներում (օրինակ՝ ԱՄՆ-ում), համակենտրոնացման հայտարարագրման շեմերը չգերազանցելու դեպքում ենս հնարավոր ռիսկերի դեպքում մրցակցային մարմինները իրավասու են սկսել համապատասխան ուսումնասիրություններ եւ ընդունել որոշումներ⁵ (տես՝ աղյուսակ 1):

Որպես կանոն՝ Նշված արժեքային շեմերը կապված են երկրի տնտեսության ծավալների հետ եւ պայմանավորված են համախառն ներքին արդյունքի մեծությամբ: Ուսումնասիրության շրջանակներում դիտարկվել են Հայաստանում, Ռուսաստանում, Եվրոպական մի շարք երկրներում, ԱՄՆ-ում եւ Կանադայում համակենտրոնացումների հայտարարագրման համար գործող շեմերը եւ դրանց վերաբերող առանձնահատկությունները: Մասնավորապես՝ դիտարկված երկրների մի մասում գործարքները ենթակա են հայտարարագրման, եթե միաժամանակ սահմանված շեմերը գերազանցում են ինչպես համակենտրոնացման բոլոր մասնակիցների ակտիվների կամ հասույթների արժեքները, այնպես նաեւ համակենտրոնացման առանձին մասնակիցների ակտիվների կամ հասույթների գծով սահմանված շեմերը: Նշված երկրների շարքում նման ընթացակարգեր են գործում Լիտվայում, Լատվիայում, Բելգիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Մասաչուսեթսում, Ռուսաստանում: Միևնույն օրինակ, ԱՄՆ-ում սահմանված շեմերը վերաբերում են ոչ թե համակենտրոնացման բոլոր մասնակիցների ակտիվների կամ հասույթների հանրագումարին, այլ համակենտրոնացման առանձին մասնակիցների ակտիվների կամ հասույթների մեծությամբ¹⁵: Բացի այդ, ԱՄՆ-ում հայտարարագրման համար եկան Նշանակություն ունի գործարքի արժեքը: Մասնավորապես՝ 78.2 մլն դոլլարից ցածր արժեք ունեցող գործարքները ենթակա չեն հայտարարագրման, անգամ՝ եթե գործարքի մասնակիցների ակտիվների կամ հասույթների մեծությունը գերազանցում է սահմանված շեմերը: Միաժամանակ նշենք, որ ԱՄՆ-ում գործարքի արժեքը 312.6 մլն դոլլարի արժեքը գերազանցելու դեպքում այն ենթակա է հայտարարագրման՝ անկախ համակենտրոնացման մասնակցի ունեցած ծավալներից: Նկատենք նաեւ, որ գործարքի արժեքը որպես կարեւոր հատկանիշ է դիտարկվում նաեւ Կանադայում, իսկ ահա Միացյալ Թագավորությունում համակենտրոնացման գործարքները հայտարարագրվում են, եթե մասնակցի հասույթը գերազանցում է սահմանված շեմը կամ էլ մի շարք ապրանքների դեպքում տեղի է ունենում խոշոր ծավալի ձեռքբերման կամ վաճառքի գործարքներ: Ռուսաստանում հայտարարագրման շեմերը տարբեր են՝ կախված համակենտրոնացման գործարքի տեսակից՝ միաձուլում կամ փայաբաժինների ձեռքբերում: Ընդ որում, միաձուլումների դեպքում հայտարարագրման համար բավարար է համարվում մասնակիցների ակտիվների կամ հասույթների արժեքների հանրագումարը, իսկ փայաբաժինների ձեռք բերման դեպքում՝ մասնակիցների հասույթի հանրագումարից բացի, սահմանված է նաեւ առանձին մասնակցի հասույթին վերաբերող պահանջ: Դիտարկված բոլոր երկրներում համակենտրոնացումների հայտարարագրման համար սահմանված շեմերը

Տարբեր երկրների ՀՆԱ շեմերի եւ դրանց հարաբերակցությունների ցուցանիշները

Աղյուսակ 2.

Հ/հ	երկրի անվանումը	երկրի ՀՆԱ (մլրդ դոլլար)	Շեմերը միլիարդ դոլլարով ¹⁷	Շեմ/ՀՆԱ %	Շեմ/ՀՆԱ հարաբերակցությունների հավելածի տեմպը (անգամ) (0.114-ը հաջորդների նկատմամբ
1	Լատվիա	28	0.032	0.114	--
2	Լիտվա	43	0.015	0.035	2.2
3	Բելգիա	470	0.106	0.023	4.0
4	Կանադա	1,532	0.304	0.020	4.7
5	Գերմանիա	3,495	0.530	0.015	6.5
6	Ռուսաստան	1,268	0.163	0.013	7.8
			0.114	0.009	11.6
7	Ֆրանսիա	2,488	0.159	0.006	16.8
8	Միացյալ Թագավորություն	2,650	0.089	0.003	32.9
9	ԱՄՆ	18,562	0.156	0.001	134.1
			0.0063	0.059	0.9
10	Չայաստան	11	0.0021	0.020	4.8
			0.0011	0.010	10.7

ունեցած տեսակարար կշռի իմաստով դիտարկվող երկրների շարքում առավել բարձր ցուցանիշ ունի Լատվիան՝ 0.114%, որով Լիտվայի համապատասխան ցուցանիշը գերազանցում է 2.2 անգամ, Բելգիայի ցուցանիշը՝ 4 անգամ, Կանադայի ցուցանիշը՝ 4.7 անգամ եւ այլն¹⁶: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Չայաստանում սահմանված շեմերը տարբերակված են՝ ըստ համակենտրոնացման տեսակների, ՀՆԱ կառուցվածքում դրանք ունեն տարբեր մասնաբաժիններ, որոնք տատանվում են 0.01-0.059%-ի միջակայքում (տես՝ աղյուսակ 2):

Համակենտրոնացման գործարքներն ուսումնասիրելիս կարելու է գնահատել ապրանքային շուկայի ապրանքատեսակային եւ աշխարհագրական սահմանները, նույնակալացնել շուկայի մասնակիցներին, որոշել նրանց ունեցած մասնաբաժինները, պարզել ընկերությունների՝ նախկինում ունեցած համագործակցության շրջանակը, գործարքից հետո նախատեսվող քաղաքականությունը շուկայում, այդ թվում՝ նաեւ շուկայում խտրական գների եւ պայմանների առաջացման ռիսկերը, գնահատել հնարավոր ազդեցությունն ինչպես սպառողների, շուկայում գործող այլ ընկերությունների վրա, այնպես էլ այդ շուկայի հետ փոխկապակցված այլ շուկաներում առկա մրցակցային միջավայրի վրա: Նշված խնդիրները բացահայտելու նպատակով իրականացվող ուսումնասիրության ընթացքում մրցակցային մարմինների համար որպես տեղեկատվական աղբյուր են հանդիսանում գործարքի մասնակիցների, սպառողների, պետական մարմինների, մատակարարների, մասնագիտական կառույցների եւ այլ անձանց կողմից տրված փաստաթղթերն ու տեղեկությունները:

Չայաստանի մրցակցային մարմինն ապրանքային շուկան հատկորոշում է՝ էլնելով ապրանքների գործածության նշանակության, կիրառման, որակական, տեխնիկական եւ այլ հատկանիշներից¹⁸: Նկատենք նաեւ, որ համակենտրոնացման գործարքներն ուսումնասիրելիս ապրանքային շուկայի որոշման անհրաժեշտություն կարող է առաջանալ այն դեպքում, երբ գործարքը տեղի է ունենում ռիսկային համարվող հորիզոնական ապրանքային շուկաներում կամ երբ ուղղահայաց շուկաներում կատարվող գործարքների արդյունքում կարող են սահմանափակվել մրցակից ընկերությունների հնարավորությունները: Որպես կանոն՝ համակենտրոնացման ուսումնասիրության ժամանակ ապրանքային շուկաների հատկորոշման անհրաժեշտությունն ի հայտ է գալիս հազվադեպ: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բազմաթիվ երկրներում ապրանքային շուկայի ապրանքատեսակային եւ աշխարհագրական սահմանների որոշման նպատակով օգտագործվում է հիփոթետիկ մոնոպոլիստի թեստը, որի համաձայն՝ Ա ապրանքի փոխադարձ փոխարինելիության հարցը որոշվում է Ա ապրանքի գնի 5-10% բարձրացման միջոցով¹⁹: Եթե գնի բարձրացման արդյունքում սպառողները պատրաստ են փոխարինել Ա ապրանքը Բ ապրանքով, ապա այդ ապրանքները համարվում են փոխադարձ փոխարինելի: Այսինքն՝ երբ Ա ապրանք արտադրողի կողմից գնի բարձրացման արդյունքում արձանագրվում է իրացման ծավալների նվազում եւ շահութաբերության անկում՝ պայմանավորված այն հանգամանքով,

տարբերակված չեն՝ ըստ ռիսկայության աստիճանի, այսինքն՝ անկախ այն հանգամանքից, գործարքը տեղի է ունենում հորիզոնական ապրանքային շուկայում, թե ուղղահայաց կամ խառը, հայտարարագրման համար սահմանված են միեւնույն արժեքային շեմերը: Մինչդեռ Չայաստանում հորիզոնական, ուղղահայաց եւ խառը համակենտրոնացումների համար սահմանված են տարբեր արժեքային շեմեր (տես՝ աղյուսակ 1): Հաշվի առնելով այն, որ հորիզոնական համակենտրոնացումների արդյունքում շուկայում կենտրոնացվածության մակարդակի մեծացման ռիսկը եւ դրա արդյունքում շուկայի վրա միակողմանիորեն ազդելու հնարավորությունն աճում է, ուստի՝ նման համակենտրոնացումների համար սահմանված հայտարարագրման շեմերն ավելի ցածր են, քան ուղղահայաց ու խառը համակենտրոնացումների պարագայում: Նկատենք նաեւ, որ ռիսկայության աստիճանով տարբեր են նաեւ ուղղահայաց եւ խառը համակենտրոնացումները, որոնց գծով սակայն ՀՀ-ում շեմերին վերաբերող տարբերություններ սահմանված չեն: Այս կապակցությամբ կարծում ենք, որ հորիզոնական ու ուղղահայաց համակենտրոնացումների հայտարարագրման համար տարբերակված մոտեցման կիրառելը, ինչպես ներկայումս գործում է Չայաստանում, մրցակցային մարմնի կողմից կատարվող հսկողությունը դարձնում է ավելի հասցեական եւ արդյունավետ: Ընդ որում, եթե ԱՄՆ-ում եւ Կանադայում ակտիվներին եւ հասույթներին վերաբերող շեմերը նույն են, ապա Ռուսաստանում եւ Չայաստանում ակտիվների համար սահմանված են ավելի ցածր շեմեր, քան հասույթների գծով: Միաժամանակ՝ նկատենք, որ ի տարբերություն ԱՄՆ-ի, Կանադայի, Ռուսաստանի եւ Չայաստանի, դիտարկված եվրոպական երկրներում գործարքների հայտարարագրման համար ակտիվներին վերաբերող արժեքային շեմեր սահմանված չեն: Չայաստանի առանձնահատկություններից է նաեւ այն, որ համակենտրոնացման մասնակիցների ընդհանուր ակտիվների եւ հասույթների շեմերից բացի, սահմանված են նաեւ շեմեր՝ ըստ համակենտրոնացման մեկ մասնակցի:

Ուսումնասիրության շրջանակներում կատարվել է նաեւ համեմատություն՝ մի շարք երկրներում ՀՆԱ կառուցվածքում հայտարարագրման համար սահմանված շեմերի մասնաբաժինների միջեւ: Համաձայն կատարված հաշվարկների, դիտարկված երկրների միջեւ արձանագրվել են զգալի տարբերություններ: Այսպես, ՀՆԱ կառուցվածքում

որ սպառողները սկսում են բարձր գների պատճառով ձեռք բերել այլ արտադրողների արտադրանք, ապա Ա և Բ ապրանքները համարվում են փոխադարձ փոխարինելի: Վերը նշվածով պայմանավորված՝ ընդլայնվում է նաև շուկայի աշխարհագրական սահմանը, այն դեպքում, եթե Բ ապրանքն իրացվում է այլ տարածքում (քաղաք, գյուղ, մարզ և այլն): Այս թեստը կատարվում է այնքան ժամանակ, քանի դեռ Ա ապրանքի գների բարձրացումը չի հանգեցնում Ա ապրանքի իրացման ծավալների նվազմանը: Նկատենք նաև, որ հիփոթետիկ մոնոպոլիստի թեստի իրականացումը բավականին ռետրոսատար գործընթաց է և նախատեսում է նաև սպառողների շրջանում հարցումների իրականացում, ինչով էլ պայմանավորված՝ ոչ բոլոր երկրներում և ոչ բոլոր ուսումնասիրությունների ժամանակ է, որ մրցակցային մարմիններն ապրանքային շուկայի սահմանները որոշում են այդ մեթոդով: Մնացյալ դեպքերում ապրանքների փոխադարձ փոխարինելիության հարցը դիտարկելու և որոշումներ ընդունելու իրավասությունը պատկանում է հենց մրցակցային մարմինը²⁰: Այս կապակցությամբ նշենք, որ նման մեխանիզմ սահմանված է նաև Հայաստանում:

Ապրանքային շուկայի որոշումից հետո անհրաժեշտ է գնահատել շուկայի կառուցվածքը և գործարք իրականացնող ընկերությունների մասնաբաժիններն այդ շուկայում: Այդ նպատակով միջազգային պրակտիկայում լայնորեն օգտագործվում է Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը, որը ցույց է տալիս շուկայում կենտրոնացվածության մակարդակը²¹: Այն դեպքում, եթե կատարված հաշվարկների արդյունքում ցուցանիշը փոքր է 1500-ից, դիտարկվող շուկան համարվում է չկենտրոնացված, 1500-2500-ի միջակայքում լինելու դեպքում՝ միջին կենտրոնացվածության, 2500-ից բարձր լինելու դեպքում՝ բարձր կենտրոնացվածության: Նման տարբերակում կիրառում է ԱՄՆ-ում, ԵՄ-ում անդր-սահմանային համակենտրոնացումների վերահսկողություն իրականացնելիս, ԵՄ մի շարք անդամ պետություններում ազգային մակարդակով և այլն: Այսպես, օրինակ, ԱՄՆ-ում նշված ինդեքսի հաշվարկի հիման վրա կայացվում է հետևյալ որոշումները²².

- Եթե գործարքի արդյունքում ինդեքսի փոփոխությունը լինելու է 100 կետից ցածր կամ եթե գործարքի արդյունքում ինդեքսը կազմում է 1500 միավորից ցածր, ապա նման գործարքը մրցակցության տեսանկյունից համարվում է ոչ ռիսկային, և հետագա ավելի խորը ուսումնասիրություններ չեն կատարվում:

- Եթե գործարքի արդյունքում ինդեքսը տատանվում է 1500-ից 2500-ի միջակայքում և փոփոխությունը լինում է 100 կետից ցածր, ապա գործարքը հանդիսանում է ռիսկային և ենթարկվում հետագա ուսումնասիրության:

- Եթե գործարքի արդյունքում ինդեքսը գերազանցում է 2500 միավորը և փոփոխությունը տատանվում է 100-ից 200 կետի միջակայքում, ապա այս դեպքում ևս գործարքը հանդիսանում է ռիսկային և ենթարկվում հետագա ուսումնասիրության:

- Եթե գործարքի արդյունքում ինդեքսը գերազանցում է 2500 միավորը, իսկ փոփոխությունը 200 կետից ավելի է, ապա գործարքը հանդիսանում է ռիսկային և մեծ է շուկայական իշխանության աճի հավանականությունը²³:

Հաշվի առնելով այս ցուցանիշի կարեւորությունը՝ ուսումնասիրության շրջանակներում կատարվել են հաշվարկներ Հայաստանի կաթնամթերքի, պանրի և հանքային ջրերի շուկաների օրինակով:

Հաշվարկները կատարվել են 2014թ. 1-ին կիսամյակի տվյալներով, որոնց համաձայն՝ կաթնամթերքի շուկայում առկա են 20, պանրի շուկայում՝ 31 և հանքային ջրերի շուկայում՝ 13 տնտեսվարող սուբյեկտներ: Կաթնամթերքի շուկայում ներառված են տնտեսվարող սուբյեկտների կողմից արտադրված և ներմուծված թթվասերի, կաթնաշոռի, կաթի, մածուի, թանի, մածուբարդոշի, կեֆիրի իրացման

ծավալներն արժեքային արտահայտությամբ²⁴: Համաձայն հաշվարկների արդյունքների, այս շուկայում Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը կազմում է 2 785 միավոր, որ նշանակում է, որ նշված շուկայում կենտրոնացվածության աստիճանը բարձր է: Միաժամանակ՝ պանրի շուկայի վերաբերյալ կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը կազմում է 983 միավոր, ինչը նշանակում է, որ շուկան հանդիսանում է ոչ կենտրոնացված: Ինչ վերաբերում է հանքային ջրերի շուկային, ապա կատարված հաշվարկները փաստում են, որ դիտարկվող ինդեքսը կազմում է 3 933 միավոր: Վերը նշվածը թույլ է տալիս եզրակացնել, որ կաթնամթերքի ու հանքային ջրերի շուկաներում կենտրոնացվածության մակարդակը բարձր է և դրանցում կատարվող համակենտրոնացվածության գործարքները մրցակցության վրա կարող են ունենալ բացասական ազդեցություն: Իսկ օրինակ՝ պանրի շուկայում կենտրոնացվածության աստիճանը ցածր է, առաջատար ընկերությունները չունեն գերիշխող դիրք, և այդ շուկայում տեղի ունեցող համակենտրոնացման գործարքներն ունեն նվազ ռիսկայինության:

Միաժամանակ՝ նշենք, որ կատարվող ուսումնասիրությունների ժամանակ մրցակցային մարմինները պետք է ոչ միայն պարզեն և փորձեն գնահատել տվյալ գործարքի արդյունքում ապրանքային շուկաներում կառուցվածքի փոփոխությունները, այլ նաև այն հնարավորությունները, որոնք կարող են ստեղծվել ապագայում նման համագործակցության արդյունքում: Այսպես, օրինակ, եթե կաթնամթերքի շուկայում գործող երկու ընկերություններ, որոնցից յուրաքանչյուրը պայմանականորեն ունի 30% մասնաբաժին, որոշում են կայացրել միավորվել, ապա անհրաժեշտ է գնահատել ոչ միայն ապրանքային շուկայի կառուցվածքը, որի արդյունքում միեւնույն անձի հսկողության ներքո կհայտնվի շուկայի 60%-ը, այլ նաև միավորման արդյունքում առաջացող այն հնարավորությունների, որոնք կարող են վերաբերվել իրացման ցանցերի միավորմանը, արտադրական հնարավորությունների ընդլայնմանն ու նոր տեսականու թողարկմանը, իրացման շղթայի մյուս օղակների վրա միավորվող ընկերությունների ազդեցության ընդլայնմանը և այլն:

Համակենտրոնացումների նկատմամբ իրականացվող պետական հսկողության վերաբերյալ կատարված ուսումնասիրության ընթացքում դիտարկվել է նաև մի շարք դեպքերում նման հսկողության իրականացման անհրաժեշտության բացակայության հարցը: Մասնավորապես՝ համակենտրոնացման գործարքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաճախ տեղի ունեցող գործարքների արդյունքում փայաբաժիններ ձեռք բերող անձինք և ընկերությունները չեն ստանում ու չեն ավելացնում ընկերությունների կառավարման նկատմամբ իրենց մասնակցության և հսկողության չափը: Մասնավորապես՝ անձանց կողմից բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններում մասնակցության դեպքում համապատասխան օրենքներով սահմանված են հստակ շեմեր, որոնք գերազանցելու դեպքում անձինք ստանում են կառավարման մասնակցության ավելի լայն լիազորություններ: Այսպես, օրինակ, երբ ֆիզիկական կամ իրավաբանական անձը մինչև գործարքի իրականացումը որեւէ ընկերությունում արդեն իսկ ունի 25% մասնաբաժին և ցանկանում է ձեռք բերել այդ ընկերության ևս 5% փայաբաժին՝ արդյունքում ունենալով ընդհանուր 30% մասնակցություն, ապա նշված գործարքը մրցակցության վրա հնարավոր բացասական ազդեցություն չի կարող գործել, քանի որ դրանով նա որեւէ լրացուցիչ իրավունք չի ստանում՝ ընկերության կառավարման գործընթացին մասնակցության առումով: Այս ուղղությամբ կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առկա են մի շարք շեմեր, որոնք Հայաստանում գործող օրենսդրությամբ ընկերությունում մասնակցություն ունե-

ցող անձանց տալիս են լրացուցիչ իրավունքներ:

Խնդրի հետ կապված՝ մեր կողմից ուսումնասիրվել է նաև միջազգային փորձը: Մասնավորապես՝ Ռուսաստանում առկա ընթացակարգերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կան հատակ շեմեր՝ 25%, 50% եւ 75% բաժնետիրական ընկերությունների համար եւ կանոնադրական կապիտալի 1/3-րդը, 1/2-րդը եւ 2/3-րդը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համար: Այն դեպքում, եթե գործարքի արդյունքում միեւնույն անձի կառավարման ներքո չեն անցնում նշված շեմերը գերազանցող փայլաբաժիններ, ապա գործարքը ենթակա չէ հայտարարագրման եւ հետեւապես՝ մրցակցության մարմնի կողմից ուսումնասիրության:

Վերը նշվածից ելնելով, կարծում ենք, որ Հայաստանում եւս մրցակցային մարմնի կողմից պետք է դիտարկվեն փայլաբաժինների ձեռք բերման միայն այն գործարքները, որոնց դեպքում տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի փայլաբաժնի ձեռք բերումը (այդ թվում՝ նաև արդեն իսկ պատկանող փայլաբաժնի) կազմում է այդ տնտեսվարող սուբյեկտի կանոնադրական կապիտալի 50%-ը եւ ավելին, երկու երրորդը եւ երեք չորրորդը:

Համակենտրոնացումներին վերաբերող խնդիրները քննարկելիս անհրաժեշտ է անդրադառնալ նաև փոխկապակցված անձանց ինստիտուտին: Համաձայն Հայաստանում տնտեսական մրցակցության գործող օրենսդրության՝ սահմանված են մի շարք հատկանիշներ, որոնց առկայության պարագայում իրավաբանական եւ ֆիզիկական անձինք հանդիսանում են փոխկապակցված անձինք կամ որ նույնն է՝ անձանց խումբ: Միաժամանակ՝ սահմանված է, որ անձանց խմբի միջև տեղի ունեցող գործարքները չեն հանդիսանում համակենտրոնացման գործարքներ եւ ենթակա չեն հայտարարագրման²⁵: Այդուհանդերձ՝ մինչեւ գործարքների իրականացումն անձանց խումբ կազմող անձինք պարտավոր են ստանալու մրցակցային մարմնի համաձայնությունը, որի անհրաժեշտությունը, մեր կարծիքով, բացակայում է, քանի որ օրենքով սահմանված հատկանիշի առկայության դեպքում թույլտվության տրամադրումը կրում է զուտ արձանագրային բնույթ, իսկ նման մեխանիզմի առկայությունն ավելացնում է ինչպես պետության կողմից կատարվող աշխատանքների ծավալը, այնպես էլ լրացուցիչ ընթացակարգեր է սահմանում տնտեսվարող սուբյեկտների համար:

Ամփոփելով վերը շարադրվածը, կարող ենք նշել, որ համակենտրոնացումների նկատմամբ հսկողություն իրականացվում է մրցակցային մարմինների կողմից աշխարհի բազմաթիվ երկրներում: Այս առումով դիտարկված երկրներն ունեն ինչպես ընդհանրություններ, այնպես էլ տարբերություններ, ինչը պայմանավորված է տնտեսության ծավալներից, կառուցվածքից, նպատակներից եւ այլն: Ուսումնասիրության արդյունքում ներկայացված միջազգային փորձը, որը վերաբերում է ապրանքային շուկայի ապրանքային եւ աշխարհագրական սահմաններին, ռիսկայնության գնահատման համակարգին, հայտարարագրման համար սահմանված շեմերին, անձանց խմբի ինստիտուտին, կարող է Հայաստանի համար լինել օգտակար եւ կիրառական՝ նպաստելով պետության կողմից համակենտրոնացումների նկատմամբ իրականացվող հսկողության արդյունավետության բարձրացմանը:

Ներկայացվել է 07.02.2017թ.
Ընդունվել է տպագրության 28.02.2017թ.

1. Debra J. Pearlstein, Robert E. Bloch, Ronan P. Harty, Paul B. Hewitt, Harvey I. Saferstein, James I. Serota, Willard K. Torn, Antitrust Law Developments, American Bar Association, Volume 1, 2002, p. 130-135.
2. Donald T. Critchlow, Philip R. VanderMeer, and Series edited by Paul Boyer, The Oxford Encyclopedia of American Political and Legal History, volume 1, Oxford University Press, 2012, p. 50-52.
3. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, <http://competition.am/index.php?menu=147&lng=1>
4. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 8, <http://competition.am/index.php?menu=147&lng=1>
5. Merger control survey 2015, <http://www.nortonrosefulbright.com/files/merger-control-survey-2015-eu-127393.pdf>
6. Legal Analysis by Lexology Lawyers; retrieved from website of analytical think tank Lexology/Global Business Media Group, <http://www.lexology.com/library/detail.aspx?g=e6086616-d91-435a-8b71-8907262d30b7>, on October 6, 2016.
7. Retrieved from website of Competition Council of the Republic of Lithuania, <https://kt.gov.lt/en/our-activities/merger-control>, on October 5, 2016.
8. Retrieved from website of Belgian Competition Authority, <http://www.abc-bma.be/fr/concentrations>, on October 5, 2016.
9. Retrieved from McMillan Lawyers website, <http://www.mcmillan.ca/2016-Canadian-Merger-Notification>, on November 1, 2016.
10. Retrieved from "Know-How on practical law research center" official website, <http://uk.practicallaw.com/8-500-5324?q=&qo=&qo=#a877140>, on October 22, 2016.
11. Федеральный закон от 26.07.2006, N135-ФЗ (ред. от 05.10.2015) "О защите конкуренции", <http://fas.gov.ru/documents/documentdetails.html?id=418>
12. Retrieved from "Know-How on practical law research center" official website, <http://uk.practicallaw.com/7-500-4886#a553861> on October 24, 2016.
13. Retrieved from UK Competition and Markets Authority website, https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/288677/CMA18_A_quick_guide_to_UK_merger_assessment.pdf, on October 25, 2016.
14. Retrieved from "Know-How on practical law research center" official website <http://uk.practicallaw.com/5-501-2849?source=relatedcontent#a507682>, on November 2, 2016.
15. Douglas F. Broder, U.S. Antitrust Law and Enforcement: A Practice Introduction, Third Edition, Oxford University Press, 2016, p. 139-174.
16. Retrieved from Statistics website, source-International Monetary Fund World Economic Outlook 2016, <http://statisticstimes.com/economy/countries-by-projected-gdp.php>, on November 20, 2016.
17. Բոլոր երկրների արժեքային շեմերը վերահաշվարկվել են որպեսզի՝ օգտվելով www.x-rates.com կայքի դեկտեմբեր ամսվա ցուցանիշներից:
18. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 4, <http://competition.am/index.php?menu=147&lng=1>
19. Retrieved from European Economic and Marketing Consultants/University of Brussels website, <http://www.ee-mc.com/tools/agreements/hypothetical-monopolist-test-hm-test.html>, on October 27, 2016.
20. A. Mitchell Polinsky & Steven Shavell, Handbook of Law and Economics, Volume 2, Elsevier, 2007, p. 1171-1175; Kai Hüschelrath, Competition Policy Analysis: An Integrated Approach, Springer Science & Business Media, 2008, p. 163-165.
21. Donald M. DePamphilis, Mergers, Acquisitions, and Other Restructuring Activities: An Integrated Approach to Process, Tools, Cases, and Solutions, Elsevier, 2010, p. 62-65; Patrick A. Gaughan, Mergers, Acquisitions, and Corporate Restructurings, John Wiley and Sons, 2007, p. 111-112.
22. Douglas F. Broder, U.S. Antitrust Law and Enforcement: A Practice Introduction, Third Edition, Oxford University Press, 2016, p. 118-121.
23. Նկատենք նաև, որ նշված շեմերը գործում են 2010 թվականից, իսկ նախկինում դրանք եղել են ավելի ցածր:
24. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կաթնամթերք արտադրող եւ ներմուծող ընկերությունները հիմնականում իրականացնում են նշված արտադրատեսակներից ոչ թե մեկը, այլ իրականացնում են միաժամանակյա արտադրություն եւ ներմուծում, կաթնամթերքի շուկան արժեքային ցուցանիշով դիտարկվել է որպես նշված ապրանքատեսակների մեկ մրցողություն: Բացի այդ, տեխնոլոգիայի եւ նշված ապրանքներ արտադրող ընկերությունների համար եական դժվարությունն չի ներկայացնում արտադրել նաև կաթնամթերքի մյուս տեսակները, ուստի մեթոդաբանական իմաստով նշված ապրանքատեսակները դիտարկվել են մեկ ապրանքային շուկայի կազմում:
25. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 11-ի 91-Ն որոշում, www.artis.am